ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզ, գ. Փարաքար ,Նաիրի 42 ՀՎՀՀ 04716831

N 9 24.05.2023թ.

«ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա. ԹԱՋԱՅԱՆԻՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ Գ. ԿԱՆԱՉՈՒՏ, ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ 6
ԷԼ.ՀԱՍՑԵ ellgaman@mail.ru

«ԽԱՉ-ԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
ՀՀ Ք.ԵՐԵՎԱՆ, Ն. ՉԱՐԲԱԽ 11. 2Տ.
ԷԼ. ՀԱՍՑԵ khach.arm.llc@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊԸ-ի և «ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊԸ-ի կոնսորցիումի (այսուհետ՝ Կապալառու) միջև Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության կարիքների համար գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված թիվ «ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 1.1 կետով սահմանված կարգով՝ Կապալառուն պարտավոր էր կատարել ստանձնած պարտավորությունները: Պայմանագրի կնքման օրվանից մինչ օրս պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար Կապալառուն որևէ աշխատանք չի

իրականացրել: Պատվիրատուն Կապալառուին և բանավոր և գրավոր բազմիցս զգուշացրել և ծանուցել է սկսել աշխատանքների կատարումը և դրա համար տվել ողջամիտ ժամկետ, սակայն Կապալառուի կողմից աշխատանքների կատարման համար որևէ քայլ չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն 2023 թվականի մայիսի 23-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված «ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5» ծածկագրով պայմանագիրը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով:

Պատվիրատուն գնման ընթացակարգը միակողմանի լուծելու մասին որոշումը կներկայացնի լիազոր մարմին՝ հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջը:

Հարգանքով՝

Փարաքար համայնքի <<Բարեկարգում>>

տնօրինության տնօրեն

Հ. Շառոյան